ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ **Արա Զոհրաբյանի,** անդամներ **Մանե Կարապետյանի, Հունան Տեր-Վարդանյանի, Արման Թաթոյանի և Արսեն Սարդարյանի,**

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 17.09.2014թ. թիվ 26/9-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի 1.5 կետի պահանջներով,

միաձայն՝

ՈՐՈՇԵՑ՝

1. ***Հաստատել որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:***
2. ***Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա է հրապարակման:***

Նախագահ՝ Արա Զոհրաբյան

Որոշում N 01/2-Լ
ք. Երևան
09 փետրվարի 2015թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
09.02.2015թ. թիվ 01/2-Լ որոշման
հանձնաժողովի նախագահ՝
Արա Զոհրաբյան _____

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Որակավորման քննությանը մասնակցելու համար դիմումները կարող են տրվել Փաստաբանական դպրոցի կողմից այն ավարտելու մասին փաստաթուղթ ստանալու պահից մինչև 2015թ. մարտի 7-ը (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 17.00-ն (աշխատանքային օրերին): Հատուկ դիմորդներն իրավունք ունեն դիմումներ ներկայացնել մինչև 2015թ. մարտի 24-ը ներառյալ՝ ժամը 10.00-ից մինչև ժամը 17.00-ն (աշխատանքային օրերին):
2. Որակավորման քննություններն անցկացվելու են՝

	Քրեական ուղղվածություն		
N	**Մոդուլ**	**Առաջադրանք**	**ամսաթիվը և ժամը**
1.	Դեոնթոլոգիա	4 խնդիրներ	10.03.2015թ., ժամը 10.00
2.	Քրեական	միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կազմել	17.03.2015թ., ժամը 10.00
3.	Քրեական	դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	24.03.2015թ., ժամը 10.00

	Քաղաքացիական ուղղվածություն		
N	**Մոդուլ**	**Առաջադրանք**	**ամսաթիվը և ժամը**
1.	Դեոնթոլոգիա	4 խնդիրներ	10.03.2015թ., ժամը 10.00
2.	Քաղաքացիական	հայցադիմում կազմել	17.03.2015թ., ժամը 10.00
3.	Քաղաքացիական	վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	24.03.2015թ., ժամը 10.00

3. Հատուկ դիմորդների որակավորման քննություններն անցկացվելու են՝

	Քրեական ուղղվածություն		
N	**Մոդուլ**	**Առաջադրանք**	**ամսաթիվը և ժամը**
1.	Դեոնթոլոգիա	4 խնդիրներ	25.03.2015թ., ժամը 10.00
2.	Քրեական	միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կազմել	31.03.2015թ., ժամը 10.00
3.	Քրեական	դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	07.04.2015թ., ժամը 10.00

	Քաղաքացիական ուղղվածություն		
N	**Մոդուլ**	**Առաջադրանք**	**ամսաթիվը և ժամը**
1.	Դեոնթոլոգիա	4 խնդիրներ	25.03.2015թ., ժամը 10.00
2.	Քաղաքացիական	հայցադիմում կազմել	31.03.2015թ., ժամը 10.00
3.	Քաղաքացիական	վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	07.04.2015թ., ժամը 10.00